ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մասնակից՝ Մանուշակ Դավթյան

ՀՀ Սյունիքի մարզի Աճանանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Ն. Ջավադյան

Վերապատրաստում իրականացնող կազմակերպություն՝

Կապանի թիվ 2 ավագ դպրոց

2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ----------3
2. Սովորողի արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը դպրոցում ----------6
3. Արժեհամակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում ---------- 8
4. Եզրակացություն ---------- 19
5. Գրականություն ---------- 20

Նախաբան

Արժեքային կողմնորոշումների համակարգը մարդու կարևոր բնութագիրն է, առանձնահատկություն, հասուն անձի բնութագրիչ, որը սոցիալական իրականության նկատմամբ արտահայտում է էական բովանդակային վերաբերմունք: Արժեքային համակարգը պայմանավորում է մարդու վարքի մոտիվացիան, ազդեցություն ունենում նրա գործունեության բոլոր կողմերի վրա: Հասարակության կյանքում իրականացող քաղաքական , սոցիալ-տնտեսական փոփոխությունները, բարոյական հարաբերություններում և արժենորմատիվային ոլորտում առկա տեղաշարժերը հանրակրթությանն առաջադրում են նոր խնդիրներ՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային փորձի յուրացման անհրաժեշտության, սովորողների մարդկային, բարոյական , քաղաքացիական որակների ձևավորման, արժեքային կողմնորոշումների, միջմշակութային հաղորդակցման իրականացման հետ:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավերումը ներառված է ՀՀ Հանրապերության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է դրանց ձևավորումը: Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման համար իր անգնահատելի և մեծ դերը ունի դպոցը, որտեղ երեխան անց է կացնում իր օրվա զգալի մասը: Այս ուղղությամբ դպրոցը և ընտանիքը պետք է համագործակցելով ձևավորեն երեխաների արժեհամակարգը՝ նպատակ ունենալով ստեղծել հասարակությանը պիտանի, բանիմաց, լիարժեք անհատ, ով կմերժի օտար արժեքները, վնասակար սովորույթներն ու բարքերը:

Արժեքային համակարգում ու ընդհանրապես մշակույթի մեջ նորամուծությունների հայտնվելը և փոփոխությունները բնական երևույթներ են, որոնք տեղի են ունեցել միշտ: Հասարակությունը դինամիկ, ինքնակարգավորվող համակարգ է, որը ձգտում է կայունության, բայց միաժամանակ փոխազդում է արտաքին աշխարհի հետ՝ պարբերաբար նոր տարրեր վերցնելով այլ մշակույթներից: Հայաստանի քաղաքացին այսօր խնդիր ունի վերանայել և ճշտել իր արժեքային համակարգը, հասկանալ, թե ինչն է իր համար արժեք և որ արժեքներն են մնայուն: Այսօր հասարակության տարբեր շերտերում ընթանում են փոփոխություններ՝

կապված նոր արժեքային համակարգի ընկալման և հնի վերաարժևորման հետ: Երեխան որպես բողոք փորձում է հակադրվել հաստատված նորմերին: Արդյունքում դպրոցականների խնդիրների հանդեպ հասարակության անուշադրության պատճառով կարող են խեղաթյուրվել նրանց բարոյական արժեքները, աշակերտի մոտ կարող է զարգանալ շեղվող վարք: Հատկապես պետք է ուշադրության կենտրոնում պահել դեռահասներին, որոնց մոտ արժեքային համակարգի ոչ բավարար ձևավորման հետևանքով կարող է առաջանալ վնասակար սովորույթներ՝ ծխել, խմել, զբաղվել թմրամոլությամբ, թղթախաղով և այլն: Այս առումով ժամանակակից մանկավարժության մեջ կարևոր խնդիր է դարձել սովորողների հետաքրքրության խթանման գործընացը գիտելիքների ձեռքբերման նկատմամբ: Սա պայմանավորված է այն փաստով, որ ներկայունս սովորողների մեջ փոքր է գիտելիքների յուրացման հանար ներգրավվածության աստիճանը: Պատճառը կայանում է նրանում, որ նոր սերնդի համար, որ ի տարբերություն ավագ սերնդի ավելի ինքնուրույն է, ունի ավելի զարգացած ինքնագիտակցություն, կարող է հստակ պատկերանել իր պահանջները և ամենակարևորը ունի հնարավորություն օգտվելու տեղեկություն տարբեր աղբյուրներից: Այդ պատճառով էլ ավանդական դասը նրան չի կարող բավարարել: Սա թույլ է տալիս օգտվելու նորացման պահանջներից, որին հասնելու համար ինտեգրված ուսուցման կազմակերպումն է: Ինտեգրում նշանակում է մասերի միավորում ամբողջի մեջ, որը ենթադրում է ոչ թե մասերի մեխանիկական միավորում, այլ փոխազդեցություն, փոխադարձ դրսևորում և գիտելիքների սինթեզ:

Կենսաբանության ուսուցման ժամանակ որպես այդ հասկացության էությունն ընկալելու ցայտուն օրինակ կարելի է ներկայացնել մարդու օրգանիզմի՝ որպես մեկ միասնական ֆունկցիոնալ համակարգ գործելու սկզբունքը: Իրականում միայն բոլոր օրգան-համակարգերի համագործակցության, միասնականության, ինտեգրացված և կարգավորված գործունեության արդյունքում է հնարավոր խոսել կառուցվածքային և ֆունկցիոնալ ամբողջական միավորի մասին:

ՈՒսուցման կազմակերպման նոր ուղին հենվում է մանկավարժների ու սովորողների ձեռքբերումների վրա: Դրանցից նշենք համագործակցային ուսուցման ու ՏՀՏ-ի կիրառումով ինտեգրացված ուսուցման հմտությունները, որոնք կարևոր են

այն ժամանակաշրջանում, երբ կրթության առաջնահերթ խնդիրն է մարդուն սովորեցնել ապրել տեղեկատվական աշխարհում, ձևավորել ՏՀՏ-ից օգտվելու գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքները հոգևոր և նյութական ֆենոմեններ են, որոնք ունեն անձնային իմաստ, դրանք անձի գործունեության համար շարժառիթներ են հանդիսանում: Արժեքները սերունդների համար նպատակ և հիմք են դառնում: Ֆ.Ե. Վասիլյուկի խոսքերով <<Արժեքը ներսից լուսավորում է մարդու ողջ կյանքը, լցնելով այն պարզությամբ և իրական ազատությամբ>>: Իսկ Ռ.Ս. Նեմովը <<արժեքային կողմնորոշումներ>> ասելով հասկանում է այն ամենը, ինչ մարդը հատկապես գնահատում է կյանքում և նրա կյանքին տալիս է հատուկ, դրական իմաստ: Անհատն աշխարհը գիտակցում է արժեքների մշակույթ: Ինտեգրացված նոր մակարդակի ու տեսակի դասերի կազմակերպման համար այսօր արդեն ուսուցչից պահանջվում է ՏՀՏ-ի օգտագործման հնարավորությունը ծառայեցնել տարբեր խնդիրներ ավելի արագ ու արդյունավետ լուծելուն և սովորողի ինքնուրույն, հետազոտական ու ստեղծարար գործունեությունը զարգացնելուն:

Սույն հետազորության արդիականության համար հիմք է հանդիսացել ՀՀ Հանրապետության պետական չափորաշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ դիտարկվող արժեհամակարգի ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը կենսաբանություն առարկայի շրջանակներում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ աշակերտների մոտ խթանելով սովորելու ցանկությունը և զարգացնելով նրա արժեհամակարգը, ուսուցիչը կարող է նպաստել վերջինիս արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը: Այսինքն՝ կենսաբանություն առարկայի գիտելիքները ինտեգրելով կարող ենք նպաստել աշակերտի մոտ առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում ձևավորելու, բացասական սովորույթներից հրաժարվելու կարողություններ:

Հետազոտության նպատակը: Երեխաների մեջ ձևավորել պատկերացում օրգանիզմի վրա ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի վնասի վերաբերյալ, նպաստել դրանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը, կշռադատված

որոշումների կայացմանը: Ցույց տալ կենսաբանություն առարկայի դերը սովորողի կյանքում, ընդգծել առարկայի դասավանդման օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության խնդիրը: Ուսումնասիրել այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան բացահայտել բացասական սովորույթի պատճառները, սովորեցնել աշակերտներին կանխատեսել վնասակար սովորությունների հետևանքները , հաստատակամ լինել որոշման մեջ, դիմակայել շրջապատի ճնշմանը:

Սովորողի արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը դպրոցում

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է , որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Արժեհամակարգը մարդու բարոյական, պրիզմայով, այսինքն մարդու սոցիալական աշխարհը ճանաչելու գործընթացը արժեքներն են որոշում: Արժեքային կողմնորոշումները ուղղորդում ու շտկում են մարդու նպատակադրման գործընթացը, որոշում են անձի տարբերությունները մյուսներից և պայմանավորում են հարաբերությունները շրջապատող իրականության հետ, և դրանով իսկ որոշում են նրա վարքագծի նկարագրությունը:Այլ կերպ ասած, սոցիալական միջավայրում արժեքային կողմնորոշումներն իրականացնում են սուբյեկտի վարքի և սոցիալական գործունեության հոգեբանական կարգավորում:1(7, էջ 81) Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: <<Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսին կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր

կրթական մոդելներ է փնտրում, ովքեր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին>>2:

Բարոյական վակուում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշ արժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: Գարեգին Նժդեհն ասում էր. <<Տուր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տուր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնոհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը>>:

Արժեքներն ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս թե ինչպես գործել: Արժեքներն ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչ պետք է անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում: Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում թե՛ սեփական անձի, և թե՛ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները, մոտեցումներն ու վարքը հիմնավորելու, այլ ընտրանքներից որևէ մեկը ընտրելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար: Արժեքներն առանցքային նշանակություն ունեն կարողունակությունների կոնցեպտուալացման համատեքստում:

Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացած կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիր է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակետների մոտ հաճախակի են դրսևորվում:Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դառնում

աշակերտների արժեհամակագային դաստիարակչական խնդիրներ լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքներում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, իմքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Արժեհամակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում

Հանրակրթական դպրոցում <<Կենսաբանություն>> առարկայի ուսուցումը, որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողական մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողունակությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձեռքբերումը:

Երկիր մոլորակը կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների միասնությունն է, մի բարդ համակարգ, որում առկա են բազմաթիվ փոխհարաբերություններ: Կյանքը ոչ միայն հարմարվում է միջավայրին, այլև մշտապես վերակառուցում է այն: Կենսամոլորակ երկիրը, նրա պատմությունը, կենսաէթիկան, կենսաբազմազանությունը գիտության այնպիսի բնագավառներ են ,որոնք գնալով ավելի ու ավելի մեծ ուշադրություն են բևեռում իրենց վրա:

Կենդանի օրգանիզմներին բնորոշ են օրինաչափ, անդառնալի փոփոխություններ: Կյանքի կազմավորման բոլոր մակարդակներում կենդանը ենթակա է էվոլյուցիոն փոփոխությունների: Կենդանի օրգանիզմների շարքում հատուկ տեղ է գրավում

մարդը: Մարդը բնության օբյեկտ է և միաժամանակ սոցիալական էակ: Ուստի մարդու կյանքը ենթարկվում է ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական օրենքներին:

Կենսաբանական կրթության ոլորտում պահանջվում է առնձնացնել մարդուն որպես ուսումնասիրության օբյեկտի:

Կարևոր է հաշվի առնել նաև այն, որ իր աշխատանքային գործունեությամբ մարդն էապես վերափոխում է շրջապատող աշխարհը: Հաճախ այդ փոփոխությունները բերում են երկարատև էվոլյուցիայի ընթացքում բնության մեջ ձևավորված փոխադարձ կապերի լուրջ խախտումների: Այդ պատճառով երևան են գալիս էկոլոգիական, առողջապահական սուր հիմնահարցեր, որոնց լուծումը պահանջում է օգտագործել գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացի նվաճումները:

Կենսաբանության դասընթացը նպատակ է հետապնդում դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, որը գիտակցի կյանքի՝ որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի, նշանակությունը և կարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա, լինի հասարակության և ինքն իր հետ ներդաշնակ:

Կենսանաբանություն առարկայի դասսավանդման ընթացքում սովորողների մոտ ձևավորվում է.

- պատասխանատու վերաբերմունք սեփական առողջության նկատմամբ,
- սանիտարահիգիենիկ նորմերը, առողջ ապրելակերպի կանոնները պահպանելու, հիվանդությունները և վնասվածքները կանխարգելելու, վնասակար սովորություններից խուսափելու կարողություններ,
- բնական երևույթների ճանաչման գործընթացում իր ուժերի նկատմամբ վստահություն դրսևորելու կարողություն:
- Էկոլոգիական ընդհանուր գրագիտություն և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն ցուցաբերելու կարողություն:
- Հասկանա կիրառվող տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և գիտակցի բնությունը պահպանելու անհրաժեշտությունը:

• Կարևորի բնական գիտությունների դերը և նշանակությունը քաղաքակրթության զարգացման և անհատի ձևավորման գործում, ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը:

Իմ հետազոտությունը կատարել եմ 8-րդ և 9-րդ դասարաններում, որտեղ սովորում են համապատասխանաբար ինը և ութ աշակերտներ: Հիմնականում կանգ եմ առել առողջ ապրելակերպի, առավել ևս վնասակար սովորությունների ազդեցությանը օրգանիզմի վրա, ինքնուրույն որոշումներ կայացնելու և ճիշտ վարքագիծ ձևավորելուն, քանի որ 8-րդ դասարանի դասընթացում կան բազմիցս թեմաներ, որոնց ժամանակ անդրադառնում ենք այդ խնդիրներին:

Հետազոտություն կատարելու և վերջնարդյունքներն ամփոփելու համար կազմակերպել եմ միջոցառում. <<Որոշումներ կայացնել. ասել <<ոչ>>:

Նպատակը.

օգնել հստակեցնել և վերաարժևորել սեփական դիրքորոշումները կյանքի արժեքների վերաբերյալ, վերհանել հասարակության առողջությունը պայմանավորող գործոնները,

օգնել գիտակցել որոշումներն ինքնուրույն կայացնելու, սեփական կարծիքը հաստատակամ արտահայտելու կարևորությունը:

Վերջնարդյունքը.

կմշակվի զանազան գայթակղությունների հանդեպ(ծխել, օգտագործել ալկոհոլ, զբաղվել թմրամոլությամբ և այլն) վաղ տարիքից կամային ներքին դիմադրություն.

կկարողանան կայացնել որոշումներ, լինել հաստատակամ, դիմակայել շրջապատի ճնշմանը,

կձևավորվի առողջության պահպանմանն ուղղված պատասխանատու վարքագիծ:

Մեթոդներ. Անհատական աշխատանք, խմբային աշխատանք, բաց հարցեր, իրավիճակների քննարկում, տեսասահիկներ, հարցաթերթիկիներ:

Աշխատանքի ընթացքը.

1. Ներկայացնել առողջությանն վերաբերող ասույթներ՝ ընդգրկելով աշակերտներին:

<<Մարդը երկրային բնության բարձրագույն արգասիքն է: Իսկ բնության գանձերը վայելելու համար մարդը պետք է լինի առողջ, ուժեղ և խելացի>>:

Ի. Պ. Պավլով

<<Առողջությունն այնքան է գերազանցում կյանքի մյուս բոլոր բարիքները, որ առողջ աղքատը, հիրավի, ավելի երջանիկ է, քան հիվանդ թագավորը>>:

Ա. Շոպենհաուեր

<<Կյանքը մեզ տրված է պարտադիր պայմանով՝ արիաբար պաշտպանել այն մինչև վերջին րոպեն>>:

Չ. Դիկենս

<<Դժվար է պատկերացնել այն բարերար փոփոխությունը, որ տեղի կունենար մարդկային ամբողջ կյանքում, եթե մարդիկ դադարեին իրենց շշմեցնել ու թունավորել օղիով, գինով, ծխախոտով, հաշիշով>>:

Լ. Տոլստոյ

2.Սահիկահանդես: Ներկայացնում են 8-րդ և 9-րդ դասարանի աշակերտները. տեղեկատվություն ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի և դրանց հնարավոր հետևանքների մասին:

Խմբերին(8 և 9-րդ դասարաններ) ներկայացնում եմ պաստառ, որտեղ ներկայացված է թմրամոլին բնորոշ ֆիզիկական և վարքագծային նշաններ.

Ֆիզիկական	Վարքագծային
Մարմնի վրա ներարկման հետքեր	Տրամադրության տատանումներ
Արբեցած կամ քարացած տեսք	Աշխատելու և սովորելու կարողությունների անկում
Կարմիր արցունքակալված աչքեր	Անկանխատեսելի վարք
Ապշած հայացք	Շրջապատի հետ հարաբերությունների վատացում
Գնդասեղի չափ կամ լայնացած բիբեր	Կենտրոնացման բացակայություն
Ախորժակի բացակայություն կամ քաշի անկում	Հանցագործության մեջ ներգրավվելու հակվածություն
Քթից հոսք	Ագրեսիվություն
Հիվանդոտ և այլայլված տեսք	Հոգնածություն
Հյուծված մկաններ	Դյուրագրգռություն
Կոորդինացիայի խախտում	Ընկճվածություն, անտարբերություն

	Ինքնամփոփություն
	Գերաշխուժունություն

Աշկերտներին ուղղորդում եմ եզրահանգման՝ ներկայացնելով, որ թմրամոլությունը շատ արագ փոխում է մարդուն: Ուրախ, անհոգ պատանիները կամ հմայիչ աղջիկները դառնում են դժբախտ, հիվանդ, տառապող էակներ: Նրանք կորցնում են իրենց հին ընկերներին, որոնց փոխարինում են նորերը՝ թմրամոլները: Հետաքրքրությունների շրջանակը սահմանափակվում է միայն թմրամիջոցների նոր չափաքանակների հայթայթումով: Նրանք չեն կարողանում սովորել, աշխատել, առաջանում են հիշողության և ուշադրության հետ կապված խնդիրներ:

Թմրամոլներն ավելի հաճախ են հիվանդանում, քանի որ նրանց օրգանիզմի բոլոր պաշտպանական մեխանիզմները խաթարվում են: Դա այլևս կյանք չէ, ընդհամենը գոյատևում է:

Խմբային աշխատանք. լրացնել հարցաթերթիկը՝.

	Ճիշտ է	Սխալ է	Չգիտեմ
Թմրամոլությունը դժվար բուժելի հիվանդություն է			
Ներարկումը թմրամիջոցներ օգտագործելու ամենավտանգավոր ձևերից է			
Հերոինից ֆիզիկական կախվածություն չի առաջանում			
Թմրամոլությունը վատ սովորություն է, որից հեշտությամբ կարելի է ձերբազատվել			
Թմրամիջոցի հազվադեպ օգտագործումը կախվածություն չի առաջացնում			
Այն մարդիկ, ովքեր թմրամիջոց են ընդունում, սովորաբար հավասարակշռված են և խելացի			
Թմրամիջոց օգտագործողները հաճախ ընկնում են դեպրեսիայի մեջ			
Հաշիշ ծխողները դժվար են դիմանում այլ թմրանիջոցներ փորձելու գայթակղությանը			

Այն մարդիկ, ովքեր թմրամիջոց են ընդունում, խուսափում են ոստիկանությունից			
Թմրամոլները հաճախ փողի համար դիմում են հանցագործ միջոցների			



8-րդ դասարան՝ յոթ ճիշտ պատասխան, 9-րդ դասարան՝ ինը ճիշտ պատասխան

3.Անհատական աշխատանք. բաժանվում է թերթիկներ, որտեղ ներկայացված են մարդու կյանքում առավել կարևոր արժեքների ցանկը՝ բացատրելով, որ դրանց առաջնահերթությունը ըստ հանգամանքների, կյանքի տարբեր փուլերում կարող է յուրաքանչյուրի համար փոխվել:

Առաջադրանք. ծանոթանալ և արժեքները համարակալել ըստ առաջնահերթության, իրենց համար առավել կարևոր արժեքի դիմաց գրելով 1 և շարունակել համարակալել ըստ առաջնահերթության նվազման:

8-րդ դասարան

Արժեքներ	1	2	3	4	5
Նյութական ապահովվածությունը			1		
Սիրած գործ ունենալը					

Ազատությունը					
Առողջությունը					
Կրթությունը					1
Երջանկությունը					
Լավ ընտանիք ունենալը		2			
Սիրելը և սիրվելը				1	
Հայրենիք ունենալը			1		
Ընկերներ ունենալը	3				

9-րդ դարան

Արժեքներ	1	2	3	4	5
Նյութական ապահովվածությունը					
Սիրած գործ ունենալը			1		
Ազատությունը				1	
Առողջությունը					1
Կրթությունը	2				
Երջանկությունը					
Լավ ընտանիք ունենալը					
Սիրելը և սիրվելը					
Հայրենիք ունենալը		1			
Ընկերներ ունենալը		1			

Քննարկում հարցերով. կատարվում է այնպես, որպեսզի անդրադարձ կատարվի արժեքներին՝ դրանց մեջ առանձնացնելով <<Առողջությունը>>, փորձել փոխադարձ կապեր գտնել վերջինիս և մյուս արժեքների միջև՝ որքանո՞վ են մեկը մյուսով պայմանավորված:

Ամփոփիչ հարց. Ինքներդ ձեզ համար նոր բացահայտումներ արեցի՞ք: Պարզաբանե՛ք:

4.Խմբային աշխատանք ըստ դասարանների . բաժանվում է քարտերի փաթեթ:

Առաջադրանք. Քննարկել քարտերում նկարագրված գործոնները և դրանք դասավորել ըստ առաջնահերթության:

Առողջության գործոնները

Աղքատություն Առողջությանը խոչընդոտող իրական գործոններից է աղքատությունը: Աղքատը չի կարող լավ սնվել, ապահովել մաքուր կենցաղ, գնել անհրաժեշտ դեղորայք:	Կրթություն Կրթությունն է առողջ հասարակության հիմնաքարը: Մարդիկ որքան ավելի շատ իմանան հիվանդությունների և դրանց կանխարգելման ուղիների մասին, այնքան ավելի ունակ կլինեն հետևելու իրենց առողջությանը:
Հոգեվիճակ Առողջության համար կարևոր գործոն է հոգեվիճակը: Իր առողջության պահպանմանն ու հիվանդությունների հաղթահարմանն ուղղված մարդու դրական, լավատեսական դիրքորոշումը կարող է ավելի մեծ դեր խաղալ, քան սոսկ դեղորայքը և բժշկական միջամտությունը	Շրջակա միջավայր Մարդկանց առողջությունը էապես կախված է շրջակա միջավայրի վիճակից: Անհատի առողջության բարելավման գրավականները միջավայրի աղտոտվածության նվազեցումը և մոլորակի բնական պաշարների խելամիտ տնօրինումն է:
Միջոցների մատչելիություն Եթե բժշկական օգնությունը մարդկանց մատչելի լինի,նրանք կկարողանան խուսափել հիվանդություններից: Բուժհիմնարկների բավարար քանակը, բարձր որակավորմամբ բուժանձնակազմը կնպաստեն հասարակության առողջության բարելավմանը:	Պատասխանատու վարքագիծ Մարդու առողջ կամ հիվանդ լինելը մեծապես պայմանավորված է նրա վարքագծով. Անսովոր իրավիճակներում ճնշմանը, գայթակղությանը դիմակայելու, սեփական սկզբունքներին հավատարիմ մնալու կարողությամբ, շրջապատի և մտերիմների, շրջակա միջավայրի հանդեպ բարձր

	պատասխանատվությամբ:





Քննարկման ընթացքում աշակերտների ուշադրությունն ուղղորդվում է <<Պատասխանատու վարքագիծ>> գործոնի վրա: Ի տարբերություն մյուս գործոնների, սա ամբողջությամբ կախված է անհատից և առավել ենթակա է կառավարման:

6. Իրավիճակների քննարկում. յուրաքանչյուր դասարանին (խմբին) տրվում է մեկ իրավիճակ, որի վերաբերյալ պետք է կատարեն քննարկում և կայացնեն որոշում:

Իրավիճակ 1. Հարևան տղան ծխախոտ է առաջարկում և համոզում գործածել:

Իրավիճակ 2. Ընկերուհու հետ գնացել եք երեկույթի: Շատերը խմում են, ընկերուհին համոզում է, որ դուք էլ խմեք:

Խմբերն իրավիճակները և որոշումները ներկայացնում են՝ հիմնավորելով:

Հստակ ձևավորված արժեքներ և դիրքորոշում ունենալով որոշում կայացնելուց զատ, կարևոր է որոշման մեջ հաստատակամ լինելը: Սա նույնպես մեծ ջանք է պահանջում, քանի որ ոչ միշտ է հաջողվում դիմակայել շրջապատի ճնշմանը:

Ամփոփելով՝ աշակերտներն առաջարկում են ձևեր, որոնցով կարելի է հաստատակամությունը ցույց տալ դիմացինին (պաստառի ձևավորում):



Հետազոտության վերջնարդյունքներն ամփոփել եմ հարցաթերթիկների միջոցով.

1. Կարողանում եք ինքնուրույն որոշումներ կայացնել.

○ Այո

○ Ոչ

2. Առողջության վրա ազդող ի՞նչ գործոններ գիտեք.

3. Ո՞րն ես համարում ամենավնասակար գործոնը.

- ○ Ծխախոտը
- ○ Ալկոհոլը
- ○ Թմրանյութը

4. Ինչպե՞ս խուսափել վնասակար գործոններից.

5. Կենսաբանություն առարկայի դասաժամերին ստացած գիտելիքները օգնում են արդյոք կողմնորոշվելու այս հարցերում.

- ○ Այո
- ○ Ոչ



Հետազոտության արդյունքներից գալիս ենք այն եզրահանգման, որ կենսաբանություն առարկայի դասավանդումը մեծ ազդեցություն ունի սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա: Ամփոփիչ աշխատանքներից և տվյալների վերլուծությունից ակնհայտ է,որ 9-րդ դասարանի սովորողների մոտ արդեն իսկ կա ձևավորված արժեհամակարգ, առողջության պահպանմանն ուղղված պատասխանատու վարքագիծ, քանի որ նրանք 8-րդ դասարանի կենսաբանության

դասընթացն անցնելիս բավականին առնչվել են ճիշտ և առողջ վարքագիծ ձևավորելու խնդիրներին, վնասակար սովորություններին:

Եզրակացություն

Քսանմեկերորդ դարասկզբին մարդկությանը սպառնացող չարիք են դարձել ալկոհոլի, ծխախոտի չարաշահումը, թմրամիջոցների օգտագործումը, բռնությունը: Երիտասարդ սերնդին համապատասխան գիրելիքներով զինելով, ճիշտ դիրքորոշում ձևավորելով, ճնշումներին դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու հմտություններ տալով՝ հնարավոր է բարելավել իրավիճակը: Պատանիները կյանքի տարբեր իրավիճակներում պետք է ի վիճակի լինեն բանակցելու և ճիշտ կողմնորոշվելու հօգուտ առողջությունն ապահովող վարքագծի: Անհատի դիրքորոշումը ձևավորվում է իր ունեցած տեղեկությունների հիման վրա: Այս կամ այն գործունեության դիրքորոշումը կախված է այն տեղեկատվությունից, որին տիրապետում է անձը: Տեղեկատվությունը, տվյալ դեպքում, գիտելիքներ են, անձնական փորձը և կյանքի ընթացքում առարկաների կամ երևույթների մասին անհատի ստացած լրացուցիչ տեղեկությունները: Տեղեկատվությունը, որին տիրապերում է անձը, կարող է դրդել նրան ձեռք բերել նոր հմտություններ կամ հրաժարվել նախկինում կիրառվողներից, որը ազդում է անհատի արժեհամակարգի ձևավորման վրա: Կենսաբանություն առարկայի նպատակներից մեկն է սովորողներին առողջ ապրելակերպին միտված վարքագիծ, վերաբերմունք և դիրքորոշում ապահովող անհրաժեշտ գիտելիքներով զինելն է, որը նման է առողջությանը սպառնացող հիվանդությունների դեմ համընդհանուր պատվաստման. դա կարող է դեռահասներին պաշտպանել վտանգավոր վարքագծային դրսևորումներից, նախապաշարումներից ու մոլորություններից, և հետագա կյանքում նրանց առողջության գրավականը դառնալ:

Գրականություն

1. Սահակյան Լ., Ալիխանյան Գ. Ինտեգրված դասը, որպես բնագիտական առարկաների դասավանդման արդյունավետության բարձրացման միջոց: Մանկավարժի միտք-2006 N 3-4
2. Մանասյան Ն. Հանրակրթության արժեքային համակարգը, <<Մանկավարժություն>> գիտանեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ. N1/2
3. Немов Р. С. Психология. 1998г.
4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում և անվտանգ վարքագծի ձևավորում, Երևան 2004
5. <<Կենսաբանություն>> առարկայի չափորոշիչ և ծրագիր